



Նպաստներ հաշմանդամու թյուններով երեխաների համար

Բովանդակություն

Ներածություն`	1
Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) վճարներ հաշմանդամ երեխաների համար`	2
Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության (SSDI) նպաստներ` մանկությունից հաշմանդամ դարձած չափահասների համար`	4
SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը և ինչպե՞ս Դուք կարող եք օգնել`	5
Չբաղվածության աջակցության ծրագրեր հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար`	6
Medicaid և Medicare`	7
Երեխաների Առողջության Ապահովագրության ծրագիր`	7
Այլ Առողջապահական ծառայություններ`	7
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	8

Ներածություն`

Այս տեղեկագիրը մինչև 18 տարեկան հաշմանդամ այն երեխաների ծնողների, ինսամակալների կամ ներկայացուցիչների համար է, ովքեր ունեն հաշմանդամություն, որը կարող է նրանց Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) վճարումներ ստանալու իրավասություն տալ: Սա նաև այն մեծահասակների համար է, որոնք հաշմանդամ են դարձել մանկության ժամանակ (մինչև 22 տարեկանը), և որոնք կարող են իրավասու լինել Social Security Disability Insurance (SSDI, Սոցիալական

Ապահովության Հաշմանդամության Ապահովագրության) նպաստների համար: (Մենք այդ SSDI նպաստը անվանում ենք «երեխայի» նպաստ, քանի որ այն վճարվում է ծնողների Սոցիալական Ապահովության հասույթի հաշվառման ներքո):

Այս տեղեկագիրը կօգնի Ձեզ կողմնորոշվել, թե արդյո՞ք Ձեր երեխան կամ Ձեզ ծանոթ որևէ երեխա կարող է իրավասու լինել՝ SSDI-ի կամ Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու համար:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) վճարներ հաշմանդամ երեխաների համար՝

SSI շրջանակներում կատարվում են ամսական վճարումներ ցածր եկամուտով և սահմանափակ միջոցներով անձանց, որոնք 65 տարեկան են կամ ավելի բարձր, կամ էլ կույր կամ հաշմանդամ են: Մինչև 18 տարեկան Ձեր երեխան կարող է իրավասու լինել, եթե նա գտնվում է ֆիզիկական կամ մտավոր խեղման իրավիճակում, կամ երկուսը միասին, ինչը համապատասխանում է Սոցիալական Ապահովության երեխայի հաշմանդամության վերաբերյալ բնորոշմանը, և եթե նրա եկամուտն ու միջոցները իրավասություն ունենալու սահմաններում են: SSI-ի վճարումների գումարը տարբերվում է նահանգից նահանգ, քանի որ որոշ նահանգներում SSI-ի վճարներին հավելում է կատարվում: Ձեր տեղամասային Սոցիալական Ապահովության գրասենյակից կարող եք իմանալ ավելին Ձեր նահանգի SSI-ի վճարման ենթակա ընդհանուր գումարի վերաբերյալ:

SSI-ի կանոնները եկամտի և միջոցների մասով՝

Ձեր երեխայի SSI-ի համար իրավասու լինելու մասին որոշում կայացնելիս՝ մենք հաշվի ենք առնում նրա եկամուտը և միջոցները: Մենք նաև հաշվի ենք առնում երեխայի տնային տնտեսությունում ապրող ընտանիքի անդամների եկամուտը և միջոցները: Այդ կանոնները կիրառելի են, եթե Ձեր երեխան ապրում է տանը: Դրանք կիրառելի են նաև եթե նա դպրոց է հաճախում, սակայն ժամանակ առ ժամանակ վերադառնում է տուն և գտնվում Ձեր հսկողության տակ:

Եթե Ձեր երեխայի եկամուտը և միջոցները կամ երեխայի տնտեսությունում ապրող ընտանիքի անդամների եկամուտը և միջոցները գերազանցում են թույլատրելի գումարը, ապա SSI-ի վճարումներ ստանալու համար երեխայի դիմումը մեր կողմից կմերժվի:

Մենք սահմանափակում ենք SSI-ի ամսական վճարումները մինչև 30 դոլարը, երբ երեխան գտնվում է բժշկական հաստատությունում, որտեղ իր խնամքի համար վճարում է առողջության ապահովագրությունը:

Հաշմանդամության վերաբերյալ SSI-ի կանոնները՝

Ձեր երեխան պետք է բավարարի բոլոր հետևյալ պահանջներին՝ հաշմանդամ համարվելու, և հետևապես՝ SSI-ի իրավասու լինելու համար՝

- Երեխան չպետք է աշխատի կամ վաստակի ավելի, քան ամսական 1.170 դոլար՝ 2017թ.-ի դրությամբ: (Այս եկամտի գումարը սովորաբար փոխվում է ամեն տարի):
- Երեխան պետք է գտնվի ֆիզիկական կամ մտավոր խեղման վիճակում, կամ երկուսը միասին, ինչը հանգեցնում է «նկատելի և ծանր ֆունկցիոնալ սահմանափակումների»: Դա նշանակում է, որ այդ պայմանները պետք է բավականին լուրջ սահմանափակեն Ձեր երեխայի գործողությունները:
- Երեխայի վիճակը պետք է անգործունակ լինի, կամ պետք է այդպիսին ակնկալվի առնվազն 12 ամսվա ընթացքում; կամ նրա իրավիճակը կարող է հանգեցնել մահվան:

Ձեր երեխայի վիճակի մասին տեղեկատվության տրամադրումը՝

Ձեր երեխայի հաշմանդամության նպաստների համար դիմելիս՝ մենք կխնդրենք ներկայացնել երեխայի առողջական վիճակի մասին մանրամասն տեղեկատվություն, և թե ինչպե՞ս է այն ազդում նրա կողմից առօրյա գործողությունների կատարման իր ունակության վրա: Մենք նաև կխնդրենք Ձեր թույլտվությունը, որպեսզի այն բժիշկները, ուսուցիչները, թերապեվտները և այլ մասնագետները, որոնք Ձեր երեխայի վիճակի մասին որևէ տեղեկատվություն ունեն, այն նույնպես ուղարկեն մեզ:

Եթե Դուք ունեք Ձեր երեխայի բժշկական կամ դպրոցական որևէ գրանցումներ, խնդրում ենք դրանք նույնպես բերել Ձեզ հետ: Դա կարագացնի մեր կողմից որոշում կայացնելու գործընթացը:

Ո՞րն է հաջորդ քայլը՝

Ձեր կողմից ուղարկված ողջ տեղեկատվությունը մենք ուղարկում ենք Ձեր նահանգի Հաշմանդամության Որոշման Ծառայությունների (Disability Determination Services) գրասենյակ: Այդ պետական գործակալության բժիշկները և վերապատրաստված անձնակազմը կուսումնասիրեն տրամադրված տեղեկատվությունը և կխնդրեն Ձեր երեխայի բժշկական և դպրոցական փաստաթղթերը, ինչպես նաև մյուս տեղեկատվությունը, որը կպահանջվի որոշելու համար, թե արդյո՞ք Ձեր երեխայի վիճակը համապատասխանում է մեր հաշմանդամության չափանիշներին:

Եթե պետական գործակալությունը չկարողանա կայացնել հաշմանդամության վերաբերյալ որոշումը՝ միայն բժշկական և դպրոցական փաստաթղթերի, և իրենց մոտ առկա այլ փաստերի հիման վրա, ապա նրանք կարող են խնդրել, որպեսզի Ձեր երեխան անցնի բժշկական գննություն կամ ստուգում: Ձևության կամ ստուգման հետ կապված ծախսերը կվճարվեն մեր կողմից:

Մենք կարող ենք անմիջապես SSI-ի վճարումներ կատարել Ձեր երեխային՝

Պետական գործակալությունից կպահանջվի երեքից հինգ ամիս՝ որոշելու համար, թե արդյոք ձեր երեխան համապատասխանում է հաշմանդամության մեր չափանիշներին: Այնուամենայնիվ, որոշակի հիվանդությունների դեպքում SSI վճարումները տրամադրվում են անմիջապես՝ մինչև վեց ամիս ժամանակահատվածով՝ նախքան պետական գործակալությունը կորոշի, թե արդյոք ձեր երեխան հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունի:

Ստորև նշված են որոշ հիվանդություններ, որոնք կարող են համապատասխանել չափանիշներին.

- ՄԻԱՎ վարակ՝ համակցված այլ ախտահարումներով
- Լիակատար կուրություն
- Լիակատար խլություն
- Մանկական ուղեղային կաթված
- Դաունի համախտանիշ
- Մկանային դիստրոֆիա
- Ծանր մտավոր հաշմանդամություն (4 կամ ավելի բարձր տարիքի երեխա)
- Ծննդյան քաշը 2 ֆունտ, 10 ունցիայից պակաս: Նորածինների մոտ ցածր քաշը մենք գնահատում ենք ծննդյան պահից մինչև 1 տարեկանը լրանալը, իսկ զարգացման խանգարումները՝ մանուկների և քայլել սկսող երեխաների մոտ՝ ծննդյան պահից մինչև 3 տարեկանը լրանալը: Այդ նպատակով օգտագործվում են նորածնի ծննդյան քաշի տվյալները, ինչպես դրանք արձանագրված են երեխայի ծննդյան վկայականի բնօրինակում կամ հաստատված պատճենում, կամ բժշկի կողմից ստորագրված բժշկական տեղեկանքում:

Եթե Ձեր երեխան համապատասխանում է նշված պահանջներից որևէ մեկին, ապա նա անմիջապես կսկսի ստանալ SSI-ի վճարումները: Եթե պետական գործակալությունը արդյունքում որոշում է, որ Ձեր երեխայի հաշմանդամությունը բավարար ծանր չէ SSI-ի համար, Դուք ստիպված չեք լինելու ետ վճարել Ձեր երեխայի կողմից ստացված SSI-ի վճարները:

SSI-ի հաշմանդամության վերանայումը՝

Երբ Ձեր երեխան սկսում է ստանալ SSI, օրենքով պահանջվում է, որպեսզի մենք ժամանակ առ ժամանակ վերանայենք Ձեր երեխայի առողջական վիճակը՝ հավաստելու, որ Ձեր երեխան դեռևս

համապատասխանում է հաշմանդամության մեր չափանիշներին: Մենք պետք է իրականացնենք այդ վերանայումը՝

- 18 տարեկանից ցածր երեխաների համար, որոնց վիճակում ակնկալվում է բարելավում՝ առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ; և
- Մինչև 1 տարեկանը՝ ցածր քաշով ծնված լինելու հետևանքով SSI-ի վճարումներ ստացող մանուկներին: Եթե որոշում կայցվի, որ մինչև իրենց մեկ տարեկանը չի ակնկալվում առողջական վիճակի բարելավում, մենք կարող ենք այդ մանուկների վերանայման ժամկետը ավելի ուշ ժամանակահատվածի համար նշանակել:

Հաշմանդամության վերանայումը կարող է իրականացվել նույնիսկ այն դեպքում, երբ երեխայի առողջական վիճակի բարելավում չի ակնկալվում: Վերանայման ժամանակ, Դուք պետք է ներկայացնենք այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեն, որ Ձեր երեխայի վիճակը դեռևս չարունակում է լրջորեն սահմանափակել նրա առօրյա գործողությունները և, որ Ձեր երեխան ստանում է բուժում, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է իր առողջական վիճակի համար:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ Ձեր երեխան դառնում է 18 տարեկան՝

SSI-ի ծրագրի շրջանակներում, երեխան համարվում է չափահաս 18 տարեկանում, և մեր կողմից կիրառվում են այլ բժշկական և ոչ բժշկական կանոններ՝ որոշելու, թե արդյո՞ք չափահասը կարող է ստանալ SSI-ի հաշմանդամության վճարները: Օրինակ, չափահասի կողմից SSI-ի ֆինանսական սահմանաչափին բավարարելու հարցը որոշելիս՝ մենք չենք հաշվարկում ընտանիքի անդամների եկամուտը և միջոցները: Մենք հաշվարկում ենք միայն չափահասի եկամուտը և միջոցները: Ինչպես նաև մենք կիրառում ենք չափահասներին վերաբերող հաշմանդամության կանոնները՝ նրանց հաշմանդամությունը որոշելիս:

- Եթե Ձեր երեխան արդեն ստանում է SSI-ի վճարում, ապա, նրա 18 տարեկանը լրանալիս, մենք պետք է վերանայենք երեխայի առողջական վիճակը: Սովորաբար այդ վերանայումը մենք անում ենք մեկ տարվա ընթացքում՝ սկսած Ձեր երեխայի 18-րդ տարեդարձից: Մենք կկիրառենք չափահասներին վերաբերող հաշմանդամության կանոններ՝ Ձեր 18-ամյա երեխայի հաշմանդամությունը որոշելու համար:
- Անգամ եթե Ձեր երեխան չի ունեցել SSI ստանալու իրավասություն մինչև իր 18 տարեկան լրանալը՝ Ձեր կամ Ձեր ամուսնու/կնոջ բարձր եկամուտ կամ շատ միջոցներ ունենալու հետևանքով, ապա նա կարող է SSI-ի իրավունակ դառնալ 18 տարեկանում:

Լրացուցիչ տեղեկատվությանը ծավոթացեք *Հավելյալ Ապահովության Եկամուտ տեղեկագրից (SSI)* (Հրատարակություն թիվ 05-11000-AM):

Սոցիալական ապահովության հաշմանդամության ապահովագրության (SSDI) նպաստներ՝ մանկությունից հաշմանդամ դարձած չափահասների համար՝

SSDI-ի ծրագիրը նպաստներ է վճարում այն չափահասներին, որոնք դարձել են հաշմանդամ մինչև նրանց 22 տարեկան լրանալը: Մենք այդ SSDI-ի նպաստը համարում ենք որպես «երեխայի» նպաստ, քանի որ այն վճարվում է ծնողների Սոցիալական Ապահովության հասույթի հաշվառման ներքո:

Որպեսզի չափահաս հաշմանդամը իրավասու լինի այս «երեխայի» նպաստի համար, իր ծնողներից մեկը՝

- Պետք է ստանա Սոցիալական Ապահովության կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստներ; կամ

- Պետք է մահացած լինի և բավականաչափ աշխատած՝ Սոցիալական Ապահովության իրավասու լինելու համար:

Այս նպաստները վճարվում են նաև այն չափահասներին, որոնք հաշմանդամ են դարձել 18 տարեկանում, և եթե նրանք ստացել են խնամարկյալի նպաստ իրենց ծնողի Սոցիալական Ապահովության հասույթի հաշվառման ներքո՝ մինչև իրենց 18 տարեկան լրանալը: Հաշմանդամության մասին որոշումը մեր կողմից կայացվում է չափահասների համար կիրառվող կանոնների համաձայն:

SSDI-ի հաշմանդամ չափահասների «երեխայի» նպաստները շարունակվում են մինչև անձի հաշմանդամ վիճակում լինելը: Այս նպաստները ստանալու համար Ձեր երեխան նախկինում աշխատած լինելու անհրաժեշտություն չունի:

Ինչպե՞ս ենք մենք որոշում Ձեր SSDI-ի նպաստների համար Ձեր “երեխայի” հաշմանդամ լինելը՝

Եթե Ձեր երեխան 18 տարեկան է կամ ավելի բարձր, ապա մենք կգնահատենք իր դիմումը և իր հաշմանդամության վերաբերյալ որոշումը կկայացնենք, ինչպես դա անում ենք ցանկացած չափահասի դեպքում: Մենք ուղարկում ենք դիմումը Ձեր նահանգի Հաշմանդամության Որոշման Ծառայությունների (Disability Determination Services) գրասենյակ, որն էլ մեզ համար հաշմանդամության որոշում է կայացնում: Չափահասների համար հաշմանդամության գնահատման մասին մանրամասն տեղեկատվությանը ծանոթացեք Հաշմանդամության Նպաստներ տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10029-AM):

SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմելը և ինչպե՞ս Դուք կարող եք օգնել՝

Դուք կարող եք SSI-ի վճարումների կամ SSDI-ի նպաստների համար դիմել Ձեր երեխայի համար՝ զանգահարելով

Սոցիալական ապահովության **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով կամ այցելելով Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակ: Եթե Դուք դիմում եք Ձեր երեխայի SSI-ի վճարումների համար, ապա Ձեզ հետ պետք է ունենաք իր Սոցիալական Ապահովության համարը և ծննդյան վկայականը: Եթե Դուք դիմում եք Ձեր երեխայի SSDI-ի նպաստների համար, ապա բացի երեխայի Սոցիալական Ապահովության համարից և ծննդյան վկայականից, կխնդրենք նաև ներկայացնել Ձեր սեփական Սոցիալական Ապահովության համարը, կամ թոշակի անցած, հաշմանդամ կամ մահացած ծնողի Սոցիալական Ապահովության համարը, ում անունով, որ ներկայացվում է SSDI դիմումը:

Դուք կարող եք մեզ օգնել որոշում կայացնելու հարցում՝

- Տրամադրելով մեզ հնարավորինս շատ տեղեկատվություն Ձեր երեխայի առողջական վիճակի մասին;
- Տրամադրելով մեզ բժիշկների կամ հիվանդանոցների այցելությունների ամսաթվերը, բժիշկների և հիվանդանոցների համար ունեցած հիվանդի հաշվի համարները, և ցանկացած այլ տեղեկատվություն, որը մեզ կօգնի ստանալ Ձեր երեխայի բժշկական գրանցումները; և
- Տրամադրելով մեզ Ձեզ մոտ առկա բժշկական տեղեկանքների կրկնօրինակները կամ տեղեկատվությունը:

ՆՇՈՒՄ՝ Կարիք չկա, որպեսզի Ձեր երեխայի բժշկից խնդրեք Ձեզ տեղեկատվություն ստանալով: Մենք անմիջապես կդիմենք նրանց Ձեր երեխայի հաշմանդամության վերաբերյալ որոշում կայացնելու համար պահանջվող բոլոր տեղեկանքների կամ տեղեկատվության ստանալու համար:

Եթե Ձեր երեխան 18 տարեկանից ցածր է և դիմում է SSI-ի համար, ապա Դուք պետք է ներկայացնեք Ձեր, ինչպես նաև Ձեր երեխայի եկամուտը և միջոցները արձանագրող փաստաթղթեր: Մենք նաև

կինդրենք Ձեզ նկարագրել, թե ինչպե՞ս է Ձեր երեխայի հաշմանդամությունը ազդում առօրյա գործողությունները կատարելու իր ունակության վրա: Դրանից բացի, մենք կինդրենք, որպեսզի ներկայացնեք ուսուցիչների, մանկական կենտրոնի խնամողների և ընտանիքի անդամների անունները, որոնք կարող են տեղեկատվություն տրամադրել՝ Ձեր երեխայի գործառույթների վերաբերյալ: Եթե դուք ունեք որևէ դպրոցական հաշվառումներ, ապա Դուք պետք է բերեք դրանք հարցազրույցի:

Շատ համայնքներում կատարվել են հատուկ պայմանավորվածություններ բուժօգնության մատակարարների, սոցիալական ծառայությունների գործակալությունների և դպրոցների հետ՝ Ձեր երեխայի հայցին ընթացք տալու համար անհրաժեշտ ապացույցներ տրամադրելու գործընթացում մեզ օգնելու նպատակով: Այնուամենայնիվ, Ձեր համագործակցությունը տեղեկատվություն և այլ փաստաթղթեր ստանալու հարցում, մեզ կօգնի ավելի արագ ավարտելու մեր աշխատանքը:

Չբաղվածության աջակցության ծրագրեր հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար՝

Մենք ունենք բազմազան եղանակներ SSI-ի վճարումներ կամ SSDI-ի նպաստներ ստացող և աշխատելու ցանկություն ունեցող երիտասարդներին խրախուսելու համար:

SSI-ի շրջանակներում՝

- Ձեր երեխայի ամսական SSI-ի վճարումը հաշվարկելիս՝ մենք հաշվի չենք առնում Ձեր երեխայի եկամտի մեծ մասը: Եթե Ձեր երեխան 22 տարեկանից ցածր է և հանդիսանում է դպրոցը կանոնավոր հաճախող ուսանող, ապա մենք լրացուցիչ հանումներ ենք անում իր ամեն ամիս ստացվող եկամտից: 2017թ-ին 22 տարեկանից ցածր հաշմանդամ ուսանողները կարող են իրենց ամսական հասույթից հանել \$1,790՝ մինչև \$7,200

տարեկան սահմանաչափով՝ SSI-ի համար իրենց եկամուտը հաշվարկելու ժամանակ: Լշված սահմանաչափերը կարող են աճել յուրաքանչյուր տարի:

- Plan to Achieve Self-Support (PASS, Ինքնուրույն Աջակցման Ծրագրով), 15 տարեկան կամ ավելի մեծ երեխան կարող է խնայել որոշակի եկամուտ և միջոցներ՝ կրթության և աշխատելու հնարավորություն ունենալու համար պահանջվող այլ բաների համար վճարելու նպատակով: SSI-ի նպատակով Ձեր երեխայի եկամուտը հաշվարկելիս՝ մենք այդ խնայված եկամուտը հաշվի չենք առնում: Ձեր երեխայի վճարման գումարը հաշվարկելիս՝ մենք խնայված եկամուտը և միջոցները հաշվի չենք առնում:
- Ելնելով իր առողջական վիճակից՝ հնարավոր է Ձեր երեխային որոշակի պարագաներ կամ ծառայություններ անհրաժեշտ լինեն՝ աշխատելու հնարավորություն ունենալու համար, օրինակ ինչպես հաշմանդամի սայլակ և կամ անհատական օգնականը: Ձեր երեխայի SSI-ի վճարումը հաշվարկելու ընթացքում, մենք Ձեր երեխայի հասույթում հաշվի չենք առնի այդ պարագաների կամ ծառայությունների համար վճարված գումարը ամբողջությամբ կամ մասնակի:
- 15 տարեկանից բարձր Ձեր երեխան կարող է օգնություն ստանալ վերականգնման և վերապատրաստման հետ կապված:
- Medicaid-ի ծածկույթը կշարունակվի, նույնիսկ եթե Ձեր երեխայի հասույթը բավականաչափ բարձր լինի SSI-ի ամսական վճարումը դադարեցնելու համար՝ մինչդեռ հասույթը որոշակի գումարի սահմանաչափում է:

SSDI-ի շրջանակներում՝

- Մինչև 22 տարեկանը հաշմանդամ դարձած չափահասը կարող է ստանալ աշխատանքային ծախսերի հետ կապված նույն օգնությունը, ինչպես նկարագրված է վերը՝ SSI-ի երեխաների դեպքում, ինչպես նաև օգնություն վերականգնման և վերապատրաստման համար:

- Կանխիկ նպաստները կարող են շարունակվել՝ մինչև անձի կանոնավոր կարգով աշխատելու հնարավորությունը:
- Medicare-ը կարող է շարունակվել մինչև 93 ամիս (յոթ տարի, ինը ամիս):

Այս ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարող եք գտնել մեր կայքում՝ www.socialsecurity.gov, կամ զանգահարելով մեր անվճար **1-800-772-1213** հեռախոսահամարով:

Medicaid և Medicare՝

Medicaid-ը առողջապահական ծրագիր է ցածր եկամուտներով և սահմանափակ միջոցներով մարդկանց համար: Նահանգների մեծամասնությունում SSI-ի վճարումներ ստացող երեխաները Medicaid-ի իրավունակ են: Շատ նահանգներում Medicaid-ը ինքնաբերաբար հասանելի է SSI-ի իրավասության հետ մեկտեղ: Որոշ նահանգներում Դուք պետք է գրանցվեք դրա համար: Իսկ որոշ երեխաներ կարող են ստանալ Medicaid-ի ծածկույթ, նույնիսկ եթե նրանք չունեն SSI-ի իրավասություն: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակ, Ձեր նահանգի Medicaid-ի գործակալություն կամ Ձեր նահանգի կամ գավառի Սոցիալական Ճառայությունների գրասենյակ:

Medicare-ը դաշնային առողջապահական ծրագիր է 65 տարեկան կամ ավելի բարձր տարեցների համար, ինչպես նաև առնվազն երկու տարվա ընթացքում Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ ստացող անձանց համար:

Նշված կանոնի համար կա երկու բացառություն: Ձեր հաշմանդամ չափահաս երեխան կարող է անմիջապես Medicare-ի նպաստ ստանալ, եթե նա՝

- Ունի խրոնիկ երիկամային հիվանդություն և երիկամային փոխպատվաստանյութի կամ պահպանողական դիալիզի կարիք; կամ

- Ունի Լու Գեիրիգի հիվանդություն (երկրորդային ամիոտրոֆիկ սկլերոզ):

Երեխաների Առողջության Ապահովագրության ծրագիր՝

Երեխաների Առողջության Ապահովագրության Ծրագիրը հնարավորություն է ընձեռում նահանգներին՝ ապահովագրել աշխատավոր այն ընտանիքների երեխաների առողջությունը, որոնց եկամուտը գերազանցում է Medicaid ստանալու համար պահանջվող սահմանաչափը, սակայն բավարար չէ՝ մասնավոր բժշկական ապահովագրություն ձեռք բերելու համար: Այս ծրագիրը տրամադրում է ծածկույթ դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի, ինչպես նաև տեսողության, լսողության, և մտավոր խանգարում ունեցող անձանց խնամքի համար, և հասանելի է բոլոր 50 նահանգներում և Կոլումբիա շրջանում: Ձեր նահանգի Medicaid-ի գրասենյակը կարող է լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել այս ծրագրի մասին, կամ Դուք կարող եք Ձեր երեխայի ծածկույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ նաև մեր www.insurekidsnow.gov կայքից կամ զանգահարելով՝ **1-877-543-7669** հեռախոսահամարով:

Այլ Առողջապահական ծառայություններ՝

Երբ Ձեր երեխան ստանում է SSI, մենք կուղեգրենք Ձեզ այն հաստատությունները, որտեղ Դուք կկարողանաք առողջապահական ծառայություններ ստանալ Ձեր երեխայի համար: Այդ ծառայությունները տրամադրվում են Social Security Act (Սոցիալական Ապահովության Ակտի) “Հատուկ առողջապահական կարիքներ ունեցող երեխաներ” (Children with Special Health Care Needs) դրույթի համաձայն: Այդ ծրագրերը սովորաբար կառավարվում են պետական առողջապահական գործակալությունների կողմից:

Այս ծառայությունները տարբեր անվանումներ ունեն՝ կախված նահանգից, օրինակ՝ երեխաների Առողջության Հատուկ Ծառայություններ (Children's Special Health Services), երեխաների Բժշկական Ծառայություններ (Children's Medical Services) և Արատավոր երեխաների Ծրագիր (Handicapped Children's Program): Այս ծրագրերի մեծամասնությունը ծառայություններ է մատուցում բուժարանների, մասնավոր բուժփոխարկների, հիվանդանոցներին կից ստացիոնար և ամբուլատոր բուժկենտրոնների և համայնքային գործակալությունների միջոցով:

Նույնիսկ եթե Ձեր երեխան չի ստանում SSI նպաստ, հնարավոր է այս ծրագրից որևէ մեկը Ձեզ համար օգտակար կլինի: Առողջապահության տեղամասային բաժանմունքները, սոցիալական ծառայությունների գրասենյակները կամ հիվանդանոցները պետք է կարողանան Ձեզ օգնել կապ հաստատելու “Հատուկ առողջապահական կարիքներ ունեցող երեխաներ” խորագրով Ձեր տեղամասային ծրագրի հետ:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելել մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնետություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելել մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնետությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (հնտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow

Social Security Administration

Publication No. 05-10026-AM | January 2017

Նպաստներ հաշմանդամություններով երեխաների համար

Benefits For Children With Disabilities (Armenian)

Produced and published at U.S. taxpayer expense

Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: